ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ЭКОНОМИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

N 01/01-16
«09» 01 2025

«Մաքս Շին» ՍՊԸ-ի
Տնօրեն Վ. Պետրոսյանին
(Երևան-Էջմիածին խճ 12, Պտղունք,
հեռ. 077-80-80-88,
էլ. հասցե maxshin2021@mail.ru,
ՀՎՀՀ 04436799)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Մաքս Շին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2024 թվականի նոյեմբերի 27-ին կնքվել է N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՇԱ-7-4 ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագրի), համաձայն որի Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ապրանքները:

Պայմանագրով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված **առնվազն 20 օրացուցային օր՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 25-ը:**

Ընկերության կողմից պայմանագրով սահմանված բոլոր ապրանքները մատակարարվել են, բացառությամբ 64-րդ չափաբաժնի՝ որը մատակարարվել է մասնակի: 64-րդ չափաբաժնով նախատեսված էր 2500քմ լամինատ AC 5, որից մատակարավել է ընդամենը 2180,64քմ-ը: Վաճառողը 2024 թվականի դեկտեմբերի 27-ին գրությամբ հրաժարվել է Գնորդին մատակարարել մնացորդը՝ 319,36 քմ-ը և խնդրել է միակողմանի լուծել պայմանագիրը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողի կողմից խախտվել են Պայմանագրով սահմանված պարտավորությունները և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում ենք՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում **պայմանագրի կատարման ապահովման** գումարը կազմում է **137324,8** (մեկ հարյուր երեսունյոթ հազար երեք հարյուր քսանչորս ամբողջ ութ տասնորդական) ՀՀ դրամ և **որակավորման ապահովման գումարը** կազմում է **205987,2** (երկու հարյուր հինգ հազար ինը հարյուր ութսունյոթ ամբողջ երկու տասնորդական) ՀՀ դրամ, որը անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում մինչև 2025 թվականի հունավարի 16-ը վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական «900018001876» հաշվեհամարին և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի գնումների բաժնին տրամադրել վճարման անդորագրերի պատճեները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը ի հայտ գալու դեպքում 'պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազոր մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերերդ օրը, իսկ որոշումն ստանալուն

հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնկցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքում որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

ա) լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիր կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

բ) մասնակցի կամ պայմանագիր կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ռեկտոր՝ _____ **Ա. Գրիգորյան**

Կատարող գնումներ համակարգող
Գոհար Թադևոսյան
հեռ. 593-483